# Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2020 թվականի N  - Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ  է.

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շար-քային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ` երեք ամիս ժամկետով` 2020 թվականի մարտի 20-ից մինչև հունիսի 20-ը:
2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղա-քացիների`

1) ռազմական ունակությունների կատարելագործման,

2) մասնագիտական վերապատրաստման,

3) մասնագիտական պատրաստման,

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպա-ների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավվել ընդհանուր թվով 374 քաղաքացու, որոնցից 233–ը` շարքային կազմի, 44-ը` ենթասպայական կազմի, 97-ը` սպայական կազմի պահեստազորայիններ:
4. Սահմանել, որ վարժական հավաքներին ներգրավվում են.

1) մոտոհրաձգային մասնագիտություններով` 57 պահեստազորային` 2020 թվականի մարտի 20 - 29-ը ներառյալ, 9 պահեստազորային` 2020 թվականի ապրիլի 6 - 12-ը ներառյալ,

2) հրթիռա-հրետանային մասնագիտություններով` 144 պահեստազորային` 2020 թվականի ապրիլի 7 -  13-ը ներառյալ, 45 պահեստազորային` 2020

թվականի ապրիլի 13 - 22-ը ներառյալ,

3) հետախուզական մասնագիտություններով՝ 32 պահեստազորային՝ 2020 թվականի մարտի 20 - 29-ը ներառյալ, 10 պահեստազորային՝ 2020 թվականի մայիսի 5 - 11-ը ներառյալ, 10 պահեստազորային՝ 2020 թվականի մայիսի 20 - 29-ը ներառյալ,

4) ռադիոէլեկտրոնային պայքարի մասնագիտություններով՝ 14 պահեստազորային՝ 2020 թվականի մարտի 20 - 26-ը ներառյալ,

5) ինժեներական մասնագիտություններով՝ 24 պահեստազորային՝ 2020 թվականի հունիսի 1 - 7-ը ներառյալ,

6) թիկունքային մասնագիտություններով՝ 22 պահեստազորային՝ 2020 թվականի ապրիլի 13 - 19-ը ներառյալ,

7) տեղագրական մասնագիտություններով՝ 7 պահեստազորային՝ 2020 թվականի մայիսի 11 - 20-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020թ.

Երևան